

այսպէս իւր մահկանացուն, 27 տարեկան հասակում։ Թաղմանը մասնակցում էին բոլոր միաբաններն ու ճեմառանը իւր ամբողջ կազմով։ Տփխխախց եկել էին մայրն ու քոյրը պ. Մամաջանի հետ։ 19-ին տեղի ունեցաւ թաղումը ո. Գայանէի վանքում։ Պատարագին Տ. Կորին վարդապետը զգացուած դամբանական խօսեց, ճեմարանի բարձր դասարանների աշակերտներից մէկը իւր մի սրտաբուխ ոտանաւորը կարդաց տաճարում և մի ուրիշը խօսեց գերեզմանի վերայ, որ փորած էր տաճարի հիւս, կողմում։ Ստ. Պալասանեանի և Վ. Աբովեանի գերեզմաններին մօտ։

Դագաղի վերայ դրուած էին երեք պսակ ճեմարանի կողմից՝ ուսուցչական խմբից, ուսանողներից և աշակերտներից առանձին առանձին, երկու պսակ հայրենակիցներից և մի պսակ պ. Մամաջանից։ Երեակայել պէտք է յուսահատմօր և քրոջ վիշտն այն պազ հողաթմբի առաջ, որի տակ հանդչում էր սիրասուն վահան նալբանդեանը։ Բնութիւնը շտալեց կարծես ծածկել անսպասելի կորուստը։ Երկու օրից յետոյ թարմ գերեզմանը ծածկուեց ձիւնի սպիտակ սաւանով։ Բայց հանգուցեալը հեշտ մոռացուող դէմքերից չէ և կապրի իւր բարեկամների սրտերում քանի նրանք բարախում են։ — Հանդիսու ոսկորներիդ վաղաթառամ ծաղիկ, թող մեր ջերմ արցունքները ցողեն այն հողն ու դամբարանը, որը ծնաւ և ընդգրկեց քեզ։ Թող Ալարիշը սփոփէ վշտացած սրտերն և մարդակարօտ հայ անդաստանին բազմաթիւ նալբանդեաններ պարդեւ։

Ե. Ճ. Վ. Մ.

Ա.Ա.ՏՈՒՄ.ՇՈ.ՏՈՒՐ Վ. ՏԵՇ ՅԱ.ԲՈՒԹԻՒՆԵԱՆ



Անցեալ օգոստասկ 18-ին մի խումբ մարդիկ Գետաբեկից Զարեքայ անապատ գալով անցայտ չարագործների

ձեռքով սպանուած դատան վանահայր Աստուածատուր վարդապետին:

Հանգուցեալ Աստուածատուր վարդապետը ծնուած է 1850-ին: Իւր ուսումն ստացել է Տփխիսի Ներսիսեան հոգեուոր դպրանոցում: 1866-ի մայիսի 14-ին ընդունուել է իրեւ հոգեուորական և կարգուել է սպասաւոր Սղնախի եկեղեցում: 1866 թ. օգոստոսի 25-ին փոխադրուել է նոյն պաշտօնով Տփխիսի Ա. Աստուածածին եկեղեցին. 1869 թ. մարտի 16-ին ձեռնադրուել է դպիր Տփխիսի Ա. Նշան եկեղեցում: 1869 թ. սեպտ. 24-ին անդամ է նշանակուել Հաղբատի վանական կառավարութեան: 1872 մայիս 30-ին ձեռնադրուել է սարկ: 1872 մայիս 31-ին կարգուել է ուսուցիչ վանական դպրոցում: 1875 յունուար 26-ին աբեղայ է ձեռնադրուել Հանգուցեալ Երեմիա Եպ. Դալստեանից և նոյն թուի մարտ 8-ին միաբան կարգուել Զարեքայ վանքին: 1875 ապրիլ 18-ին կարգուել է վանահայր նոյն վանքին, ուր և մնաց մինչև մահը, սակաւ ընդմիջումներով, և Երկար աշխատութեամբ կարողացաւ հաստատել տալ վանքի կալուածները: 1877 հոկտ. 25-ին նաստացել է լանջախաչ հանգուցեալ Գէորգ Դ. կաթողիկոսից:

Զարագործութեան հանգամանքները չեն պարզուած: —Աստուած քաղցր անէ դժբաղդ զոհի դատաստանը և հանգուցանէ ի լոյս երեսաց իւրոց. ամէն:

## ՏԱ.ՃԿԱ.ՀԱ.ՅՓ

Երամեան յօբելեան: —1903 թուականի օգոստոսին Վանում տօնուելու է Երամեան վարժարանի 25 ամեայ յորելեանը: Վարժարանի հիմնագիրն՝ Համբարձում Երամեան, որ ամբողջ 25 տարի աննկուն ջանքերով առաջ է տարել իր գործը՝ ընկճուելով ոչ մի արգելառիթ հանգամանքի առաջ: որ իր ընտրած ասպարէզում աշերի լոյսը կորցնելուց յետոյ էլ չի քաշուել գործից, արդարեւ արժանի է ամէն քաջալերութեան: Մի ցաւալի